Տարեմ Ի Յուլիսի № 27 — 1874 — Տարեմ Ի Յուլիսի № 27

Հրատարակվում է ամեն շաբաթ օր մի թերթ: Տարեկան բաժանորդագրության գինն է 7 ռ: Մուրացվել կարելի է խմբագրատան (Ա. Վարդանեանց տանը) և համ. ենթիմանձնանցի խանութում:

Յուրաքանչյուր անձի, որ ցանկանայ տպագրել տալ ցանկացողը պետք է 10 մինչև տասերի համար վճարէ 1 կոպեկ: Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն և օտար լեզուներով:

ՄԵԼՈՒ ՀԱՅԱՏԱՆԻ

ԿՐԻԳԻՐ

ԿԱՂԱԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Խմբագրութիւնս յուլիսի 1-ից ընդունում է բացի տարեկանից եւս կէսամեայ բաժանորդագրութիւն: Վերջին գին 4 ռ.

Խմբագրութիւնս խնդրում է, որ Մելոի այս տարուան բաժանորդագրութեան գինը մինչև այժմ չըվճարողները բարեհաճեն շուտով հասցնել այն խմբագրութեան:

Թիֆլիս 13-ին Յուլիսի

Մենք Մելոի մէջ խօսելով տուրք էջմիածնի ձեմարանի վերայ յայտնել ենք կարծիք, որ նա պէտք է լինի կրօնական մամռագիտական բարձրագոյն դպրոց, որ թէ առել յարմար էր Սիմոն Նահապետութիւնն և ապրելագրութիւնը պահելու համար և թէ առել նպատակաւոր էր:

Այժմ լսում ենք ուրախութեամբ, որ առաջնակարգ անգամներին պիտի բացվին էջմիածնայ ձեմարանի դռները իւր աշակերտ սանների հիւրընկալելու համար: Նա պիտի սկսի իւր գործունէութիւնը ապրիլի 1-ին և ակնկալուած համար, նա պիտի սկսէ ծնանելու հարազատ զաւակներ նոցա համար, ղարդարած դիտութեամբ և զինած բարոյականութեամբ: Բայց այսպիսի արդիք ծնանող աւազանի վերայ շատ խոհելու է, շատ զգուշութեամբ կանգնելու է այն: Որպիսի է այդ ձեմարանի նպատակը, որպիսի ուղղութիւն պիտի ունենայ նա, մինչև յայժմ անծանօթ է բոլորովին: Այդ հասարակ թեանց, ուստի և մենք չը կարողացանք այդ նպատակին վերայ, որ առել օգտաւէտ կարող էր լինել մեր կենդանութեան:

Մենք գարձալ կրկնում ենք, որ այդ ձեմարանը կարող էր յարատևել և օգտաւէտ լինել ապին, եթէ նա միայն կրօնական մամռագիտական ուղղութիւն ուներ, յայտնի բան է, բովանդակելով իր մէջ և այն բնական ու պատմական գիտութիւնը, որոնք սերտ կապ ունեն կրօնի և նկուղեցւոյ պատմութեան հետ: Սկզբնական և միջնակարգ դպրոց առնում բոլորովին առելորդ է: Ձեմարանի համար պատրաստական դպրոցներ են բոլոր վիճակային դպրոցները: Բայց մի մասնագիտական ձեմարան 3 կամ 4 տար ան ընթացքով, լուսաւորեալ և բարեկիրթ նկուղեցական պաշտօնեայք պատրաստելու համար, հնշտութեամբ կարելի էր պահպանել և առելի նպատակաւոր էր: Այս մամռագիտական ձեմարանը մանողները պիտի լինեին այն երիտասարդները, որոնք աւարտած էին իրանց ուսման ընթացքը վիճակային հոգևոր դպրոցներում: Ապա լինելով արդէն հասակ առած երիտասարդներ, ֆիզիքապէս բաւական ամրացած, ենթարկուելու էլին էջմիածնի օդի և ջրի ազդեցութեան էլ մեծ չափով:

Սորա համար հարկաւոր էր վիճակային հոգևոր դպրոցների նախապիծները միակերպ անել և յարմարացնել ձեմարանի նախագիծը նոցա նախապիծներին:

Վիճակային հոգևոր դպրոցները կարող էին լինել — Թիֆլիսում, Ախալցխայում, Շուշիում Ա. քու լիսում, Ալեքսանդրապոլում, Երևանում, Նոր Նախիջևանում, Աժդարխանում և Շամախում (եթէ հնար կլինէր միջոց գտնել բանալու: Այս դպրոցում իրանց ուսումն լաւ ուսարող աշակերտները, եթէ կ'ցանկանային, առանց քննութեան կարող էին մանել ձեմարանը իրանց ուսումն կատարելագործելու համար: Այս ձեմարանում իրանց ուսումն ուսարողները պէտք է առանան իրաւունք ուղղակի քահանայութեան կամ վարդապետութեան և հոգևոր դպրոցներում, հոգևոր վարչութեան մէջ և այլ եկեղեցական պաշտօնների մէջ գերազանցութիւն ունենան ուրիշներից առաջ: Մենք կարծում ենք, որ Սիմոն ձեմարանն միայն այս դիրքը բռնելով կարող է ունենալ յարատև գոյութիւն և ծառայել ապին և եկեղեցու նպատակաւորապէս:

Իսկ ինչ վերաբերում է ամենց կարծաց էջմիածնի իւր մէջ ձեմարան ունենալու անյարմարութեան մասին, մենք կասենք, որ Սիմոն պէտք է ունենայ մի բարձրագոյն հոգևոր ուսումնարան իւր նշանակութիւնն և ազդեցութիւնը պահպանելու համար, բայց նա ինքը այլ ուր տեղափոխվել չէ կարող, որովհետև նորա հետ կապուած են շատ յիշատակներ, որոնք նպիրական են ազգի համար:

ԱԶԳԱՅԻՆ

Մենք ներկայ տարեայս Մելոի 5 և 7 համարներում խօսեցանք աղքատութեան վերայ, թէ ինչպէս նա սկսում է և վերջը զօրանալով դառնում է հասարակական ախտ: Խօսեցանք, թէ նա որքան զարգացած է արևմտեան եւրոպացում և ինչ հնարներ գործ են դրած այնտեղ գանագան ժամանակներում այդ հասարակական ախտը առաջը առնելու համար և յետոյ, թէ ինչպես և մեր մէջը, մանաւանդ բազմամարդ կենդրոններում սկսում է նա երևիլ իրրև հասարակական ախտ: Աղքատութիւնը ժամանակակից է մարդկութեան պատմութեան, միայն նա իրրև հասարակական ախտ հանդէս է գալս գալես առելն այն հասարակութեանց մէջ, որոնք նահապետական և պարզ կեանքից անցնում են առելի արհեստական վիճակի, ուր կեանքի պիտոյքներն առելանում, կեանքը առելի բարդանում է, նիւթական հարստութեան առելանալով: Իրաւ է, առաջը ասում է: «Աղքատութիւնը չանցանք, մեղք չէ»: Բայց մենք կասինք, որ նա թէև չանցանք չէ, բայց շատ մեղքերի և չանցանքների աղբիւր է, որովհետև քաղցը մարդուս ակամայ շատ չանցանքներ գործել է տալիս: Այս պատճառով էլ նա ուր գնացել է, հալածվել է իրրև հասարական ախտ: Հալածողը նկել է մարդուն բնաւաւր գոլթն և բարեգործութիւնը: Նահապետական ժամանակներում, երբ մարդոց մէջ հասարական հոգին այնպէս զարգացած էր, ամեն ցեղ, տոհմ և ընտանիքն իւր պատին ու ամօթը պահել էր համարում իւր անկարող անդամների փաքրաթիւ պիտոյքը հոգալը: Բայց երբ կազմվեցաւ առելի բազմամարդ կենդրոններ (հասարակութիւնք), հասարական հոգին զարգացաւ, նահապետականութիւնը տեղն տուեց: Հասարակութեանց աղքատների հոգատարութիւնն էլ ցեղերից, տոհմերից և ընտանիքներից անցաւ հասարակութեանց վերայ: Որքան հասարակութեանց կեանքը բարդացաւ, այնքան և՛ առելացաւ աղքատութիւնը, նոյն չափով զօրացաւ և՛ բարեգործական պատմանքը: Սոյն այս երևոյթը ամէն յայտնի երևում է և մեր կովկասեան Հայ հասարակութեանց մէջ. (ցէս Մելոի № 7. ուր յիշած են բարեգործական ընկերութեանց կազմվելը Կովկասի մէջ): Սոյն այս համարում ասած ս. Բըլընտոնց նամակին Ախալցխայից աղբ առաց գանձանակի հաշուի մասին ապացոյց է մեր ասածին: Աղքատաց թիւը առելացել է, առելացել է և առաքը նոցա համար հինգ տարուան ընթացքում: Սիսալ է այն կարծիքը, թէ հին ժամանակը լաւ էր, աղքատութիւնը քիչ էր: Գաղտնիքը սիսալից չափառութեան մէջ էր, կեանքի պարզութեան մէջ էր: Քանի բարդանայ մեր հասարակութեանց կեանքը, աղքատութիւն էլ պիտի գառնայ հասարական ախտ, յայտնվի և իրրև տարտխիկ վարակվիչ ծոյլ առողջների վերայ էլ: ուստի և հասարակութեանը կ'մնայ հոգսը նորա առաջը առնելու համար: Որքան հասարակութիւնը, իրրև մարդկային ընկերութիւն, բարձր է նահապետականութիւնից, այնքան էլ նորա միջոցները ա-

Ժէ. ՏԱՐԻ

Ժէ. ՏԱՐԻ

Գաւառական ՖԷՅԼԻԵՏՕՆ

(Ուղարկված)

Մարդկային ապրի մի յատկութիւնը. — Ախալցխայի կրթի հետևանքները. — Երկրիս ծագագական զօրութիւնը. — «Մեղուի» և «Մշակի» Ախալցխայի ձղձակիցները. — Պօղոս Քաֆանեանցը և իր խոստումները. — Ըրաշտութեան երկրպագուները. — Ախալցխայիների մեղքերի քաւարանը. — Սովորական սուտուններ, — Հրէայ-կռմանց օրէնսդիտութիւնն և օրէնսդէտ Հայերը, — Անմատչելի մարդիկները և նրանց պարագործութիւններ. — Ասիայի ժողովրդի բժիշկները.-Պ. Բաֆֆիի զարմանալի պատմութիւնը:

—

Բնաւորեան մարդուս մէջ դրած յատկութիւնների չարքում կայ ամեն մի մարդուն սեպհական յատկութիւն ևս, որը յայտնի է ընդհանուր առմամբ կիրք անունով:— Փիլիսոփաները կոչելով մարդկային այդ յատկութեան վերայ պատշաճաւոր կերպով ճառելը, եթէ մինչև հիմայ ճառաւածները լաւ չեն համարվել, ես՝ իրրև մի ֆէլիետոնիստ, հաւանայի կերպով ակնարկում եմ ընթերցողներիս, որ Ախալցխայի Հայ ժողովուրդն ես կազմելով մարդկային ազգի մի փոքրիկ մասն՝ իր մէջ կրում է այդ բնական յատկութիւնը: Բայց ես կարող եմ ասել, որ այդ յատկութիւնն ուրիշ տեղերում այնքան հասած չէ իր կատարեալ զարգացմանը, որքան Ախալցխայում, եւ եթէ այսօր լուսաւորեալ աներիկացին կամ եւրոպացին պարծենում է նորանով, որ նա չատ և չատ յառաջացել է մասաորական զարգացմամբ, ախալցխային էլ, ընթերցող, կարող է պարծենալ, որ նա էլ մեծ յառաջդիմութիւն է գործել կրից զարգացմամբ: եթէ լուսաւորեալ հասարակութիւններին իրանց մտաւոր զարգացմամբ գործեր են չինում, կարծեմ էլ, որ ախալցխացիք իրանց կրից զարգացմամբ բանչար են քաղում..... ինչ հարկաւոր է մի առ մի գրել այստեղ այդ գործերը..... նրանք միշտ աչքի առաջ չեն միմիչ և ախալցխացիների այդ դիպեցիկ յատկութեան չնորհիւը չէ, որ այսօր նրանց ուսումնարանները բարեզարդ կարգաւորեալ գրութեան մէջ են... Նրանց մատաղ սերնդի ապագան յանձնուած է բանիբուն դաստիարակների հոգաբարձութեանը... Նրանց հասարակական գումարներն ապահով և հաստատիմ անձանց պահպանողութեանը... նրանց վաճառականութիւնը հասել է մինչև գերաճեծար չարչիութեան աստիճանը... և չմոռանաք մինչև անգամ նրանց փողոցները հասել են այն աստիճան կանոնաւորութեանը, մաքրութեանը և վայելչութեանը, որ նրանց դրութիւնների կանոնաւորութեան և մաքրութեան հետ կարող են մրցել, և այդ բանը չատ բնական է. որովհետև մարդուս դրսանը լինելով մարմնոյ մէջ տեղը՝ նրանից դուրս եկած դրսաձեռներն երկրիս ձգտողական զօրութեամբ աւելի դէպի վար երթալով, քան դէպի վեր, աւելի օժանդակում են մարմնոյ սաորին մասին, այսինքն ոտքերին ապահովութեանը, քան գլուխներին, որոնք ինդուած են Ախալցխայում բոլորովին քնութեան կամքին և այս սարսափելի երաշտութեան ժամանակ արևի բոցավառ ճառագայթների խնամքին..... իսկ այդ բոցավառ ճառագայթները, ընթերցող, վերչին ժամանակումս իւրեանց չորացնող և ցամաքեցնող ազդեցութեան ենթարկելին մեր խեղճ դաշտերի և արտերի հետ միասին նաև մաքուրը «Մեղուի» ու «Մշակի» Ախալցխայի թղթակիցների, որոնց յօդուածները սրանից մի քանի ժամանակ յառաջ չիչեալ թերթերում վերլուրում էին..... Յաւալի վիճակ, որ յանկարծ հասաւ այդ պարոններին, այնպէս որ մինչև անդամ իր գրաւոր հրապարակական խոստումը կատարելու արգելք դառաւ Ախալցխայի բուլվիցիստ Պօղոս Քաֆանեանցին (Մշակ 1874 № 6: Երաշտութեան վերայ խօսելով չըկարծէք, պարոններ, որ ես նրանում, լոկ ինձս եմ տեսնում, ոչ, ոչ, այդպես չէ. նեղրոզութիւն եմ խնդրում..... Երաշտութիւնն էլ ունի իր երկրպագուներին... և ինչպես կարելի է ընդհակառակ հաւարել այն բանը, որ Ախալցխայի կալուածատէրները և հարուստ աղանները խանկ ու մամալ են պատուի ձէ որ, պարոններ, վերջապէս պէտք է մի օր դառարկել նրանց ամբարանոցները..... վայելուչ գիներով սաղացնել նրանց կիսափուտ ու մլքած ցորեններն ու այդպիսով ապրուստից չըզրկել նրանց բազմաթիւ ամանդրուխոչոր ձագերը», ապա թէ ոչ քաւարանը կըմնանն ձեր կամանց զարդ ու գարդարանքները—արարանչ ու ոսկի չերիդները — և նրանց ձեռքից բաց չեն թողներ Ախալցխայի սիղանաւորները, մինչև չէք քաւեր դուք ձեր մեղքերը և չէք վճարկր նրանց 20-ից մինչև 50 սոլորական ասկոնները, որոնց ենթարկուած են ձեր «օրինք պրոտերը». — Ո րիշ բան են, իհարկէ, Հրէանները և նրանց օրէնսգէտ կիանկիները. որոնք վէգքիլներով կաշկանդել են իրենց էրիկները և երբ այս վերջիններս պատուէր ցանկալով իրենց պարտատէրները բարեհաճում են գթաքլել իրենց վիրերը (անձկանաց), նոքա, այդ խարազկացուներները, գիմում են դէպի դատաստանատները և սրանց վճռագրերով վաճառում մարդկանց բոլոր կայանքները, որ ապահովեն իրենց անձերը, սոված թեամբ չանցնեն իրենց սև օրերը, ինչպես այդ անում են մեր Հայկուհիները: Բայց չէ կարելի ասել թէ այդ բանից իսպառ զուրկ են Ախալցխայի բոլոր Հայերը..... Նրանցում էլ պատահում են երբեմն պեղակ մարդիկներ մանաւանդ եկեղեցական և ուսումնարանական գումարներ կառավարողները — երեսփոխաններն ու հոգաբարձները — որոնք չատ լաւ գիտեն հաչիւ տալու եղանակները և յօդուածները քերելու ընտիր հնարքները, որքան էլ որ ժողովեցնած լինեն նրանց մատեաններում..... իսկ սաղացնելով իչխանաւորները աւելորդ ոսոխ դնել գրպաններում և թէպէտ չըլսանալ, բայց և չըզարձնել ղէպի սխալողները, այդ իսկ առում են հայկազան-խէլիֆները — երջանկալիչատակ quasi ուսուցիչները, էֆէնդի ու փաչա մարդկանց պաշտպանածները, իսկ այս վերջինները թէև բարձր են և անմատչելի, ինչպէս երկնքի ամպերը, բայց չատ անգամ սուղում են դիանալ երեսում ինչպէս օձերը, երբ չարկ է լինում իրազործել իրենց նպատակները: Երբ ժամում են նոքա հասարակութեան տները, էլ ծվ կարող է թուել պիտակեան տեսակ տեսակ վէրքերը, որ պատճառում են խեղճերին նրանց խայթոցները..... Այնմ մօտ կէս դար է, ընթերցող, ցաւ ու տառապանքներ, վիշտ ու տառապանքներ, կռիւ ու դժգոհութիւնները, ոտնակոխ առնել սեպհական չաները, քանդել, աւերել միմեանց տները, կազմել միմեանց դէմ կատակչութիւնները ժառանգել են Ախալցխացիները և այդ բաների գառն հետևանքները հասցրել են աղքատութեան, յուսահատութեան խեղճ ժողովուրդները..... Ա յդպէսով խանդարուել են ուսումնարանները.....վատնուել, փչացել մեծամեծ գումարները, քանդուել, քայքայուել ընկերութիւնները, բռնաբարուած, ոտնատակ եղած իրաւունքները, խեղդուած, հնչուած երիտասարդ այժերը, միայն թէ առաջ գնայլին էֆէնդի ու փաչա մարդկանց անձնական կըրքերը և նրանց իչխանական զարնուրելի նետերը..... Բոլոր այս հիւանդութիւնները, որ այդքան երկար ձարակում է Ասիայի ժառանգ էֆէնդի ու գաչա մարդիկները, ունի իր հիմնաւոր պատճառները, որովհետև Ասիայում մոլլա — բժիշկները թէև ճանչնում, բայց չեն բժշկում հիւանդութիւնները, այլ քչում աւելի մարմնոյն խորերը, որ երկայն ձգեն իրենց արմատները..... եթէ չէք հաւատում իմ խօսքին, կարող եք, պարոններ, դիմել «Մշակի» ֆէլիետոնիստ Ասիացուն (Մշակ 1874 № 7) և նոյնոնիստ Ասիացուն (Մշակ 1874 № 18) զարմանալի պատմութիւն չէ այդ ձեր կողմից. —

Թոխմախ:

«Մշակ» 7 հունվարի 1873 թվից կդնվի տպագրության հետևյալ ձևով։

ՄՇԱԿ
(ԹԵՐԹ «ՄՇԱԿ ՀԱՆԱՍՏԱՆԻ»)
[ԼՈՒՍԻՆ]։

Մեր ժամանակակից ազգաբնակության մեջ 1867 թ. ընդունված տասնորդական համակարգի հետևանքով ծագած անհարմարությունները ամենքին էլ հայտնի են։ Ամենքն էլ գիտեն, որ մինչև 1867 թ. մեր ազգաբնակության մեջ գործ էր ածվում 84 տեսակ կշռի միավոր, որոնցից ամենից շատ գործ էր ածվում 2 ու. 84 կամ 3 ու. 84 կ. կշռի միավորը։ Ամենքն էլ գիտեն, որ 84 կամ 3 ու. 84 կ. կշռի միավորը ոչ միայն ամենից շատ գործ էր ածվում, այլև ամենից ավելի հարմար էր։ Ամենքն էլ գիտեն, որ 84 կամ 3 ու. 84 կ. կշռի միավորը ամենից հարմար էր, որովհետև նրանով կարելի էր ամենից հեշտությամբ կշռել ամենից շատ ապրանքները

Ս. Պետերբուրգ, 9-րդ տարի

Հրատարակվում է ամեն օր, բացի կիրակի և հանրային տոներից հետևյալ ժամերին՝ առավոտյան ժամը 8-ից մինչև 11-ը և երեկոյան ժամը 4-ից մինչև 8-ը։

Գինը բաժանորդագրության՝ տարեկան 16 ռուբլի, կիսամյա 8 ռուբլի, երեք ամսով 4 ռուբլի։ Արտասահման՝ տարեկան 20 ռուբլի։ Առանձին համարի գինը 2 կ. Գինը վճարվում է նախապես։ Բաժանորդագրվել կարելի է խմբագրությունում և բոլոր փոստարանների միջոցով։ Հասցեն՝ Ս. Պետերբուրգ, Ներսիսյան փող., № 5։ Խմբագրության հեռագրական հասցեն՝ Արարատ։

Հրատարակության տարեկան 9-րդ տարին։ Ս. Պետերբուրգ, 1873 թ. Հունվարի 1։

ԴԱՎԱՂ

Ս Ա Ն Ր Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն

Ս. Պետերբուրգ, Հունվարի 1։

իւր հրապարակ ու դաշտաշար վր է Հայն ի Հայ։ Ցայդ ժամանակ ոչ ոք ոչ ինչ ունէր ասել ընդդէմ Հայոց, ոչ ոք ոչ ինչ ունէր ասել ընդդէմ Հայոց, ոչ ոք ոչ ինչ ունէր ասել ընդդէմ Հայոց